

ԶԻՆԱԻԴԱ ՎԱՆԻԻ ԲԱԼԱՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր,
«Եվրասիա» միջազգային համալսարանի դասախոս
balayan21954@gmail.com*

ORCID ID:0009-0004-2330-7860

DOI: 10.54503/978-5-8080-1568-5-155

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ՔՆՆԱՀԱՄԱԿԱՐԳԸ «ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԴԱՐԻ» VI ՀԱՏՈՐՈՒՄ

*Բանալի բառեր՝ ակադեմիական ուղղություն, մտքի կարգա-
պահություն, հնդկահայ մշակույթ, ցեղային բնագոյ, Միսիթարյաններ,
գրական դպրոցներ, կլասիցիզմ, միջնադար:*

Ներածություն

Մեկնաբանական և արժեքանական զուգորդումներում
փորձել գիտաքննական անդրադարձ կատարել հայ գրականա-
գիտության ակադեմիական ուղղության մեծագույն ներկայա-
ցուցիչ, ՀՀԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի գիտական
հսկայածավալ վաստակին՝ նշանակում է ուշադիր և քննախույզ
հայացք ձգել հայ գրականությանը, գրաքննադատությանը, ազ-
գային գաղափարաբանությանը, փիլիսոփայական, քաղաքա-
կան, բանագիտական, բանահյուսական մտքին, խոսել հայ և
համաշխարհային մշակույթների առնչությունների, գրական ուղ-
ղությունների, դպրոցների, մեթոդների և նրանց պարբերացու-
մների պատմության մասին, որոնց ակունքներում հաստատա-
պես կանգնած է եղել ու այսօր կանգնած է ֆենոմենալ գիտնա-
կան Սերգեյ Սարինյանը:

Մեր՝ Ս. Սարինյանի մասին քննական դեռևս առաջին՝ «Սերգեյ Սարինյանի քննահամակարգը» ուսումնասիրությունում դիտարկել ենք նրա մտախառնվածքի բնորոշ գծերը՝ հատկանշելով հետևյալը. «Ս. Սարինյանն աստվածային ներշնչանքի գիտական-նորարարը երևույթ է, որը ժամանակի բարդ ու հակասական հոսքերում համառորեն՝ մի անմեկնելի սևեղծությունամբ, ձգտել է գրականագիտության, հայ ազգային գաղափարաբանության, գրականության փիլիսոփայության, քննադատական-տեսական մտքի պատմության մեջ՝ համաշխարհային գիտական առաջավոր մտքին համահունչ և զուգահեռ, որոշակի սկզբունքներ, հիպոթեզներ առաջադրել, ստեղծել ու հաստատել և դրանք նոր ձևույթներում, նոր ըմբռնումներում տանել դեպի գիտականացում...», և իրավամբ հաստատել, թե. «Ս. Սարինյանը բարդ ու խոր անհատականություն է՝ բնավորությամբ, խառնվածքով՝ սկեպտիկ..., հակումներով՝ խիզախող, մտասևեղծմամբ՝ հեղափոխական...»¹, մտքի կարգապահությամբ՝ անգերազանց ու օրինապահ...

Սույն հոդվածի առաջադիր խնդիրն է Սերգեյ Սարինյանի «Հայոց գրականության երկու դարը» կոթողային բազմահատոր աշխատության, մասնավորապես VI հատորի մանրակրկիտ քննությունը:

VI հատորի բովանդակությունն ու գաղափարական շերտերը

«Հայոց գրականության երկու դարը» աշխատության VI հատորը 4 առանձին բաժիններից է բաղկացած հետևյալ վերնագրերով՝ **I. Պատմություն և տեսություն, II. Քննադատությունը ինչպես որ է, III. Անդրադարձ, IV. Լուսանցանշում** (վեր-

¹ **Առաքելյան-Բալայան Չ., Սերգեյ Սարինյանի քննահամակարգը, Մտեփանակերտ,** «Մոնա» հրատ, 2006, (այսուհետև՝ Առաքելյան-Բալայան Չ., Սերգեյ Սարինյանի քննահամակարգը), էջ 15:

ջին երկու վերնագրերով մասեր առկա են նաև գրականագետի «Հայոց գրականության երկու դարի» IV հատորում):

Գիտնականի՝ սույն խորագրով ուսումնասիրությունների և հոդվածների նախորդ գրքերը հրատարակվել են 1988–2009 թթ.:

Ուսումնասիրությունների և հոդվածների սույն հատորում առկա հիմնական խնդրառությունը՝ ըստ քննաբան-տեսաբանի, առաջադրում է գրականության պատմության և տեսության արդի ուղղությունների քննական վերլուծությունը:

Էքսկուրս կատարելով հայոց գրականության ժամանակագրության հոսքերում՝ Ս. Սարինյանը ժողովածուն բացում է 2 մաս ներկայացնող «Հայոց գրականության նորոգությունը 17–18-րդ դարերում» արժեքավոր ուսումնասիրությամբ, որը ներկայացնում է հայ գրականության պարբերացմանը վերաբերող, բազմաթիվ գրականագետ-հայագետների կողմից քննում-հերքում-հաստատումների ենթարկված, բայց այդպես էլ մինչև արդի ժամանակաշրջան դպրոցական-բուհական դասագրքերում վավերացում չգտած հրատապ հարցերով: Դրա կապակցությամբ արդարացի հարցադրումներ է առաջադրում գիտնականը՝ վկայակոչելով փաստարկված աղբյուրներ...

Հայոց նոր գրականության սկզբնավորումը ո՞ր ժամանակաշրջանից է սկսվում, ո՞ւմ գլխավորությամբ... Արդյո՞ք XIX դարասկզբից՝ Խ. Աբովյանի գլխավորությամբ: Սարինյանը դիտված փաստը «վրիպում» է անվանում՝ կատարելով հարցի դրվածքի խոր և հիմնավոր քննություն, թվարկելով երևելի անունների հետաքրքիր շարք: «Հայ մատենագրության առաջին պատմաբան Սուքիաս Սոմայանը,- գրում է գիտնականը,- «Շրջան Հայաստանի գրականութեան» (1829) ձեռնարկում հայոց նոր գրականության սկիզբը վերագրում է 17–18-րդ դարերի սահմանագծին: Պարբերացման այս սկզբունքը ընդհանուր առմամբ պահպանում են գրականության պատմագրության հա-

ջորդ հեղինակները՝ Կարլ Նեյման, Ստեփանոս Նազարյան, Հովսեփ Գաթրճյան, Ստեփանոս Պալասանյան, Գարեգին Զարբեհանալյան, Եղիշե Դուրյան, Աբրահամ Զամինյան, Լեո, Արփիար Արփիարյան, Հակոբ Օշական և ուրիշներ»²:

Պարբերացման նախադրյալի վերաբերյալ թվարկված հեղինակների մոտ Սարինյանը տարբեր մոտեցումներ է նկատում «պատմական (Նազարյան, Հովսեփ Գաթրճյան, Գարեգին Զարբեհանալյան), լեզվական (Եղիշե Դուրյան), գրական-մշակութային», որոնց էական հարցադրումը ընդհանուր է՝ «նոր գրականության սկիզբը վերագրել 17-18-րդ դարերի սահմանագծին»³:

Շոշափված հարցերի բնույթից հասկանալի է դառնում, որ տեսաբանը համամիտ է գրականության պատմագրության այս հեղինակների հետ և զարմացած է, թե ի՞նչ սկզբունքներով և ի՞նչ կերպ, ո՞ւմ կողմից հաստատվեց նոր գրականության պարբերացման սկիզբ ընդունել 19-րդ դարասկիզբը՝ Խ. Աբովյանի գլխավորությամբ: «Իսկ ահա անցյալ դարի 20-ական թվականներին,- պնդում է տեսաբանը,- վավերացվեց և դպրոցական ու բուհական դասընթացներում գրանցվեց մի տեսակետ, ըստ որի՝ նոր գրականությունն սկզբնավորվել է 19-րդ դարասկզբին, և հիմնադիրը Խաչատուր Աբովյանն է: Թե ինչպե՞ս, ո՞վ և ի՞նչ ձևով կատարեց այդ փոխակերպումը, դժվար է ասել, սակայն կատարվել էր վրիպումը, և արդեն 1934-ին Թադևոս Ավդալբեկյանը իր տարակուսանքն է արտահայտում այս «համատարած մոլար» կարծիքի հանդեպ»⁴:

² Սարինյան Ս., *Հայոց գրականության երկու դարը, զիրք վեցերորդ, Ստեփանակերտ*, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2015 (այսուհետև՝ Սարինյան Ս., զիրք վեցերորդ), էջ 5:

³ Նույն տեղում, էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 5: Տե՛ս Ավդալբեկյան Թ., *Հովհաննես Հովհաննիսյան*, Երևան, 1934, էջ 7-8:

Ուսումնասիրության վերնագիրը հուշում է, թե ինչ կարևորություն էր տալիս իր հարցադրմանը գրականության պատմաբանը, և սպասելի էր նրա կողմից ձեռնարկած գործընթացի հիմնավորումը՝ ներկայացված ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդին: «Անցյալ դարի 60-ական թվականներին հայոց նոր գրականության պատմության հինգհատորյակի ստեղծման առիթով պարբերացման խնդիրը դրվեց ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի քննությանը,- նշում է ակադեմիկոսը,- և արդյունքը եղավ այն, որ վավերացվեց մի որոշ տեղաշարժ՝ նոր շրջանի սկիզբը սահմանելով 18-րդ դարակեսը՝ 1750-ական թվականը: Սակայն առկախ մնացին գրական-պատմական իրողություններ, որոնք անհամաչափություն էին ստեղծում դարաշրջանի գրական-գեղարվեստական տեսությունը գնահատելու հարցում: Ստացվեց, որ Մխիթարյանների և հնդկահայերի մշակույթը ներկայացվում է «նոր շրջանի գրականություն» հասկացությամբ, իսկ նույն ժամանակին ստեղծագործող Պաղտասար Դպիրը, Պետրոս Դավանցին և Սայաթ-Նովան վերագրվում են միջնադարի գրականությանը»⁵:

Ըստ իր խիզախող մտախառնվածքի՝ ավելի հեռուն նայելով՝ տեսաբանը շարունակում է իր տրամաբանական տեսակետներն առաջադրել՝ վկայակոչելով հարցի կարևորության վերաբերյալ գրականության երկու խոշոր պատմաբանների՝ Լեոյի (Առաքել Բաբախանյան) և Մ. Աբեղյանի հարցապնդումները և նշելով. «Կարծում եմ, ժամանակն է վերանայել հարցի դրվածքը և առաջադրել գիտականորեն հիմնավորված սահմանում, ավելի ստույգ, վերականգնել ճշմարտությունը՝ ըստ գրականության դասական պատմագրության: Առաջադրելով դրույթը՝ անհրաժեշտ է հանգամանորեն անդրադառնալ հարցի դրվածքին եր-

⁵ Նույն տեղում, էջ 5-6:

կու ականավոր բանագետների Լեոյի և Մանուկ Աբեղյանի աշխատություններում»⁶: Տրամաբանը գտնում է, որ այդ երկու հեղինակների քննումներում անդրադարձվել են գրականության նախորդ պատմագիրների տեսակետները:

Սարինյանը, հարցի դրվածքի վերաբերյալ Լեոյի մեկնությունների առանցքում պատմական կարևոր տեղաշարժների գործոնը նկատի ունենալով, փաստում է. «Լեոն երևույթը դիտում է պատմական տեղաշարժների ոլորտում պարսկական իրականության ներքաղաքական կյանքի հանգամանքներում..., ակնհայտ նշանակություն է վերագրում Ամիրգունա գործչի ազգային քաղաքականությանը, որը էական խթան հանդիսացավ «ազգային ուժերի» արթնացմանը 17-րդ դարի «քարուքանդ Հայաստանում», «հայ ազգության վերականգնումի միտումներին»»⁷:

Հայ ազգի ինքնաճանաչման, հանճարի ցուանքների, մշակութային ժառանգության բացահայտման ու հանրությանը, պատմությանը, աշխարհին ցույց տալու գաղափարը մշտապես ուղեկից էր Լեոյին. պատմաբան-արվեստագետը չի թաքցնում, որ իր ուշադրության կենտրոնում հայոց պատմությունը հայտնվել էր 1880-ական թթ. կեսերից: «Ինձ ղեկավարող, ինձ դրողը, ինձ հրամայողաբար առաջ մղողը,- գրում է Լեոն 1908 թվականին,- եղել է հայ ժողովուրդը...: Լինելով ժողովրդի զավակ, սնված ու մեծացած նրա տառապանքների, նրա անհուն ցավերի մեջ, ես իմ գործունեության յուրաքանչյուր քայլում, ամեն ժամ, ամեն րոպե նրան՝ այդ մեծ ու տարաբախտ մոր ձայնին էի ականջ դնում, նրա վեհ սրտին էի դիմում և այնտեղից ներշնչումներ ստանում...»⁸ : Իրավամբ, հեղինակը իր էության ու իր ստեղծագործության շարժիչ ուժն էր համարում ժողովրդին՝

⁶ Սարինյան Ս., գիրք վեցերորդ, էջ 6:

⁷ Նույն տեղում, էջ 6:

⁸ «Վտակ» (Թիֆլիս), 1908, թիվ 111:

փաստելով. «....Միակ հեղինակավոր, միակ կարող, միակ արդար ուժը, հույսը ապագայի»⁹:

Հայոց նոր գրականության սկիզբը 17–18-րդ դարերի սահմանագծին փաստագրող Լեոն, ժողովրդի դերը և պատմության գործոնը բարձր գնահատելով, անվերապահորեն կարևորում էր և՛ նրան լուսավորյալ տեսնելու գաղափարը, և՛ 17–18-րդ դարերի համատարած խավարի մեջ լուսավորության թույլ առկայծող կենտրոնները գնահատելը, քանզի ժամանակաշրջանը հայոց համար չափազանց կործանարար էր և անվստահելի...

Բարդ ու հակասական այդ ժամանակաշրջանը որոշիչ էր հայ ժողովրդի համար՝ դրական և բացասական առումներով:

Ողբերգականը հայ ժողովրդի դեմ իրականացված Շահ-Աբասի (1606-ական թթ. սկսած) ահավոր արշավանքներն էին, պարսից արքայի հրամանով կազմակերպված հայոց մեծ գաղթն էր՝ «մեծ սուրգունը», քրիստոնյա ազգերից՝ հայերից, հույներից..., մանկաժողովներ-դեղիններ (տղայաժողով, աղջկաժողով) կազմակերպելը, հայ մանուկների սերուցքը արմատից հայրենիքից կտրելը, օտարության քշելը, իր ժողովրդի գլխին մահացու սարսափ-տապար՝ ենիչերներ դարձնելը, թուրքերի հարեմները լցնելը, վաճառքի հանելը...

Մաղաքիա Դերջանցի վարդապետին հաջողվեց մեծ կաշառքի գնով վերացնել տալ պարսից այդ հայասպան վավերագրերը...

Հուսատուն Հայոց աշխարհի տարբեր մասերում անապատականության սկզբնավորումն էր..., լուսավորության տարածումը, աշխուժացումը, դպրոցների ստեղծումը, կրթության ու հավատի հարգը...

Սարինյանը հատկանշում է հետևյալը. «Պատմական խառնակ այս հանգամանքներում ահա արթնանում է «ցեղային

⁹ «Հուշարար» (Թիֆլիս), 1907, թիվ 11, էջ 163:

բնագործ», և 17-րդ դարի սակավաթիվ լուսավորչալ մարդիկ մտորում են վերակենդանացնել հայոց կյանքը՝ Սարգիս եպիսկոպոսն ու Կիրակոս քահանան՝ Սյունիքի Տաթև վանքում, Ներսես Մոկացին՝ Բաղեշի դպրոցում, Էջմիածնի միաբանությունից Մովսես Խոտունացին, Փիլիպոս կաթողիկոսը, Հակոբ Ջուղայեցին, ապա հաջորդում են մտավոր արթնացումները Պոլսում, Ջուղայում և այլուր»¹⁰:

«Սակավաթիվ լուսավորչալ մարդկանց» պակաս չունեին նաև Արցախը՝ Վարանդան, Դիզակը, Խաչենը և այլ մելիքություններ և մելիքական տներ: Օրինակներից է Դևոնդագ անապատ սրբավայրում՝ Դոնդիկում (Դոնդեկ) գործող սրբակրոն Հովհաննես ճգնավորն իր բյուրավոր հավատացյալներով ու եկեղեցու նվիրյալ սպասավորներով: Սուրբ Դևոնդը կառուցված է հրաշակերտ մի բարձունքում, տեղադրված Վարանդայի մելիքության Ավետարանոց մելիքանիստ բերդ-ամրոցից հարավ-արևելյան մասում, Քիրսի պարի գլուգահեռությամբ, ապա Ավետարանոցում՝ վեհակառույց **Սուրբ Աստվածածին եկեղեցուն** (1651 թ.): Ավետարանոցի Կուսանաց Անապատում կամ Գայանեի վանքում (եկեղեցի-տաճար, XVII դար – 1616 թ.) որպես գրիչ ավետարաններ-սուրբ գրքեր էր ծաղկում Մելիք Շահնազարյան մելիքության քաջարի մելիք Հուսեինի և հերոսական Աննա խաթունի դուստր Գայանեն: Գայանեի գլխավորությամբ, մոր՝ Աննա խաթունի և քեռու՝ մելիք Ավան-Եգանի համատեղ ջանքերով ու գաղտնի կազմակերպած ապստամբությամբ, համարյա 300-400 տարի առաջ (մոտավոր հաշվումներով՝ 1733-ի գարնանագալին), մի գիշերվա մեջ ջախջախվեց Արցախի բոլոր բնակավայրերում տեղակայված օսմանյան զորապետ Սարը Մուստաֆա փաշայի 7.000-ոց զորքը՝ դուրս շարտվելով Ավետարանոցից, փրկելով ժողովրդին փաշայի կողմից նախապես ծրագր-

¹⁰ **Սարինյան Ս.**, գիրք վեցերորդ, էջ 7:

ված ահավոր ցեղասպանությունից: Սարը Մուստաֆա փաշան սարսափից փախավ Գանձակ...

Ապա **Մովսես Անապատականը**, որ գործում էր Նախիջևանի Շոռթթ և Ագուլիս վայրերում: Վերջինիս աշակերտներից իր բացառիկ կերպարով ու հայրենասիրությամբ հայտնի էր Ագուլիսի դպրոցի վերակացու և ուսուցիչ տեր Անդրեաս Երեցը, ով, իմանալով մանկաժողովի մասին, շահի դաժան հրամանից փորձում է փրկել իր սիրասուն և ձեռնասուն աշակերտներին՝ նրանց գլուխներին գոնջ քսելով, մազաթափելով:

Շահ-Աբասը Անդրեաս Երեցին դատապարտում է մահապատժի. վերջինս չի համաձայնվում ո՛չ պարսիկ կրոնապետի պահանջը կատարել՝ հավատը ուրանալ, ո՛չ ունիթորների առաջարկը ընդունել՝ հավատարիմ մնալով իր հայրենիքին ու քրիստոնեական հավատին:

Անդրեաս Երեցը նահատակել է 1617 թ. նոյեմբերի 18-ին: Նրա մարմինը քառատել են և մասունքները թողել թափված, որ կենդանիները հոշոտեն...

Անդրեաս Երեցի առաջին վիպական կերպավորումը տվել է 16-րդ դարի վերջի և 17-րդ դարի առաջին քառորդի նշանավոր գործիչ, փիլիսոփա, Լիմի միաբանության հիմնադիր առաջնորդ, բանաստեղծ-տաղերգու Ներսես Մոկացին՝ իր «Գանձնոր նահատակին և սուրբ քահանային Անդրեասի Նախճաւանցոյ, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն, ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի» երկում: Գանձը գրված է ականատեսի ու ականջալուրի վկայությամբ:

17-ից 19-րդ դարերի հայոց կյանքը վերակենդանացնել ցանկացող անապատականության սակավաթիվ ներկայացուցիչների մասին տեղեկություններ կան նաև Գոթիչ վանքի վա-

Նահայր Առաքել Կոստանդյանցի «Պատմութիւն Արցախի» արժեքավոր գրքում¹¹ և այլ ձեռագիր մատյաններում:

Սարինյանը կարևորում է Լեռի՝ հայոց որոնումների շրջանի ընդհանրականները 17-րդ դարի գրական արգասավոր շարժի երկու խոշոր երևույթների վերաբերյալ. մեկը հայոց նախնի մշակույթի (ըստ Սարինյանի՝ Լեռն այն բնաշխարհիկ է համարում) վերականգնումն է հայրենիքում, մյուսը՝ հայկական տպագրության ի հայտ գալը, «որ մարմնացնում է հայոց կուլտուրական աշխատանքի ամենաուժեղ հոսանքը 17-րդ դարում»¹²:

Գիտնականը բարձր է գնահատում Լեռի տեսության ընդհանրական կողմը հայկական քաղաքակրթության վերաբերյալ: «.... Հայկական արվեստը,- գրում է Լեռն,- հայ կյանքի ուրիշ արտահայտությունների հետ, վկայում է, թե 17-րդ դարի հայ միտքը, աշխարհայացքը նոր ժամանակների ուղղություններն են ընդգրկում և ձգտում են դեպի այն լուսավոր առաջնորդը, որ հանդիսանում էր հայության համար նոր գաղափարներով վերածնվող եվրոպականությունը»¹³:

Արժևորելով Լեռի նկատառումները հայոց տպագրական մշակույթի ու հայագիտության (քերականության, տրամաբանության, բառարանաստեղծման) զարգացման վերաբերյալ՝ ակադեմիկոսը նկատում է. «....Հատկապես այս երևույթը սկզբունքային նշանակություն ունի 17–18-րդ դարերի հայ գրականության ու մշակույթի պատմությունը գնահատելու տեսակետից»¹⁴:

Գալով 18-րդ դարի հայոց մշակութային, քաղաքական, հասարակական, սոցիալական կյանքի քննությանը՝ Սարինյանը

¹¹ Տե՛ս **Կոստանդյանց Ա.**, *Արցախի պատմություն*, Երևան, «Արմավ» հրատ., 2019:

¹² **Լեռ**, *Հայոց պատմություն*, հատոր 3, գիրք առաջին, էջ 349:

¹³ Նույն տեղում, էջ 427:

¹⁴ **Սարինյան Ս.**, *գիրք վեցերորդ*, էջ 8–9:

հետևում է Լեոյի մեկնության տրամաբանական ուղղվածությանն ու մտահանգումների շեշտադրությանը, հատկապես կապված ազգային-ազատագրական շարժումների արթնացման գործընթացի, Արցախի մեկիքությունների ակտիվ դիվանագիտական քաղաքականության դրսևորումների հետ (Բսրայել Օրի, հայ-ռուսական դիվանագիտական կապեր, Դավիթ-Բեկի իշխանությունը Սյունիքում, Փոքր Սյունիքի լանդշաֆտ, Հովսեփ Էմինի հայրենավառ ջանքեր, ով երդվել էր Անգլիայում զինվորական բարձրագույն կրթություն ստանալ, վերադառնալ հայրենիք և «սև հայերի» արցախցիների միջոցով ազատագրել Հայաստանը), իսկ ամենակարևորը մտավոր շարժման ակտիվությունն է, օրինակ ունենալով քաղաքակիրթ Եվրոպան՝ մանավանդ Լուսավորության դարաշրջանում:

Քաղաքակիրթ Եվրոպայի գիտակրթական, գրական, լուսավորչական, փիլիսոփայական մտքի առկայծումները՝ Վոլտերի, Լոկկի, Մոնտեսքիոյի, Ռուսսոյի և այլոց հանճարի պտուղները, մուտք գործելով հայ իրականություն, հիմք են հանդիսանում հայ լուսավորական դարի մշակույթի ձևավորման:

Սարինյանը, Լեոյի տեսական դիտարկումների ծրագրայնությամբ հետամուտ, գրում է. «Այդ մշակույթը Լեոն բաժանում է չորս հոսանքի՝ հայ լուսավորչական վանականություն, հայ կաթոլիկ լուսավորչական վանականություն, հայ վաճառականների գրականություն, հայ բանաստեղծություն և արվեստ»: Ակադեմիկոսին պարզապես զարմանք է պատճառում Լեոյի խոր նվիրումը իր ծրագրած երևույթի համակողմանի քննության և արժևորման համակարգի հստակությանն ու բացահայտման բազմակողմանի ընթացքին հետևելու կարգը: «Լեոն,- շարունակում է Սարինյանը,-...անդրադառնում է այդ հոսանքների հանգամանալից վերլուծությանը, առանձնացնում Պոլսի, Բաղեշի, Էջմիածնի, Գանձասարի դպրոցների, Մխիթարյանների, հնդկա-

հայ համայնքի գործունեությունը, վկայակոչում դեպքեր, դեմքեր, իրադարձություններ, վերընթերցում բնագրեր, որոնք ընդլայնում են պատկերացումները 18-րդ դարի հայոց մտավոր որոնումների, գաղափարական ուղղությունների և համաշխարհային իրադարձությունների հայկական արձագանքների վերաբերյալ: Թե մինչև ուր է հասել հայ միտքը,- շարունակում է իր քննությունը ակադեմիկոսը,- Լեոն վկայակոչում է «Որոգայթ փառացը»՝ «իր բովանդակությամբ կատարյալ մի պարծանք հայ գրականության մեջ», որ «օրենք» և «հանրապետություն» իրավաքաղաքական եզրույթների գաղափարով արձագանքում է «լուսավորության դարի վեհ ազատական իդեալներին»՝ տողերի արանքում վկայակոչելով Ջոն Լոկիի, Մոնտեսքիոյի, Վաշինգտոնի և դարաշրջանի հասարակական ու ազատական առաջընթացը նշանավորող քաղաքակրթական այլ երևույթներ»¹⁵:

Արևելքի և Արևմուտքի շփման առանցքում հայկական մշակույթը առանձնահատուկ երանգներ ուներ, ըստ այդմ էլ, Սարինյանի դիտարկմամբ, այն ուներ ուրույն ճակատագիր: Լեոն համոզմունք է հայտնում, թե հայերը, որպես քրիստոնյա ժողովուրդ, միևնույն է, «....իրենց ներքին կյանքում միանգամայն ինքնագլուխ էին, ենթարկված էին նույն աշխարհայացքներին, նույն գաղափարներին, որոնք տիրապետում էին միջին դարերում ընդհանուր քրիստոնեության մեջ և նույն այդ տրամաբանությամբ հետևում էին այն ներքին տեղաշարժերին, որոնք տեղի էին ունենում քրիստոնյա Եվրոպայում»¹⁶: Հայկական գաղութներին ակտիվ դեր վերապահելով ու ազգային բուժուագլիային որպես հաղորդակցվող օղակ ներկայացնելով՝

¹⁵ **Սարինյան Ս.**, գիրք վեցերորդ, էջ 10: Տե՛ս **Լեո**, *Հայոց պատմություն*, հ. 3, գիրք երկրորդ, 1973 (այսուհետև՝ **Լեո**, *Հայոց պատմություն*, հ. 3, գիրք երկրորդ), էջ 430, 440-441:

¹⁶ **Լեո**, *Հայոց պատմություն*, հ. 3, գիրք առաջին, էջ 13:

Լեոն վերջինիս առաջին պլան է մղում՝ հաստատելով, թե նա «գույն ու ընթացք է տալիս մեր ամբողջ նոր պատմության՝ խոր կերպարանափոխություններ մտցնելով մեր կյանքի մեջ»¹⁷: Լեոն դիտարկված երևույթը հայոց պատմության կարևոր հատկությունն է համարում:

Քննության նման եզրակացություններից ելնելով՝ Սարինյանը նշում է, թե այդ դիտարկումը գրականության պատմաբան Լեոնին «լիովին հիմք է տալիս մեր պատմությունը «16-րդ դարից սկսած դնելու «Նոր պատմություն» վերնագրի տակ»¹⁸:

17-18-րդ դդ. հայոց նոր գրականության պարբերացման հիմնախնդրի առաջադրմանն ու քննությանը հետամուտ՝ Սարինյանը, առաջադրելով դրույթը, հարցի դրվածքը հանգամանորեն քննելով Լեոնի՝ երևույթը մեկնաբանող ուսումնասիրություններում, անդրադառնում է մյուս բանագետի՝ Մանուկ Աբեղյանի ներկայացրած գիտական պնդումների տեսական մեկնությունների բացահայտմանը:

«Եվ այսպես,- գրում է Սարինյանը,- եթե հարցի դրվածքում Լեոն առանձնապես ընդգծում է պատմահասարակական կողմը, պատմական ֆորմացիաների անցման իրողությունը, ապա Մանուկ Աբեղյանը երևույթը քննում է գրականության տեսադաշտի վրա: «Ուրվագծեր 19-րդ դարի հայոց գրականության պատմությունից» տեսական ակնարկը նա սկսում է իր ոճին յուրահատուկ շեշտադիր հարցով, թե «որ ժամանակից պետք է դնել մեր նոր գրականության սկիզբը: Արդյո՞ք 18-րդ դարում Վենետիկի Մխիթարյաններից, ինչպես դնում են հաճախ: Պատասխանը,- շարունակում է Սարինյանը,- միանգամայն որոշակի է՝ Մխիթարն ու Մխիթարյանները սկիզբ չեն, այլ շարունակող»¹⁹:

¹⁷ Նույն տեղում, էջ 13:

¹⁸ Նույն տեղում, էջ 14:

¹⁹ **Սարինյան Ս.**, գիրք վեցերորդ, էջ 12:

Ի՞նչ է ակնարկում այս ուղղությամբ եվրոպական համալսարաններում ուսանած Աբեդյանը. «Մեր հնի և նորի բաժանումը լինում է ոչ թե 18-րդ դարում, այլ 16-րդ դարի վերջերը և 17-րդի սկզբում, երբ համատարած իշխում էր ավերակ և թանձր տգիտություն»²⁰:

Համատարած այդ ողբերգության, անկման հիմնական պատճառները Աբեդյանը համարում է Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը և Կոստանդնուպոլսի թուրքական գրավումը (1453 թ.), Բյուզանդական կայսրության ոչնչացումը: Բյուզանդական կայսրությունը անընդմեջ փորում էր տարաբնույթ թշնամիների դեմ իրեն պատվար հանդիսացող Կիլիկիայի հայկական թագավորության հիմքերը, ինչը թուլացրեց դեպի իր սահմանները առաջացող ահարկու թշնամիների դեմ պայքարող հայոց ուժերի պատնեշը՝ դառնալով երկու պետությունների կործանման հիմնական պատճառներից գլխավորը:

Շուրջ երկու հարյուր տարի թուրք-պարսկական արշավանքների մեջ տրոհված հայ ժողովրդի ծանր, ողբերգական վիճակը Սարիսյանը որակում է որպես «հայոց հին քաղաքակրթության» գրեթե ոչնչացում՝ դիտելով, թե «խզվում է կապը անցյալի հետ, փոշիանում է աշխարհիկ կյանքը, վերասերվում է եկեղեցին՝ հնչեցնելով ազգի ֆիզիկական ոչնչացման տագնապը»²¹:

Իր իսկ բնութագրմամբ, «հայոց պատմության ամենաանկյալ շրջանի» ծանրությունից դուրս գալու գրավականը Աբեդյանը համարում է հետևյալը. «Պետք էր հայությանը փրկել վերջնական անկումից և վայրենացումից: Եվ ահա 17-րդ դարում սակավաթիվ լավագույն մարդկանց բոլոր ձգտումը կենտրոնանում է այն բանի մեջ, որ կենդանացնեն մեռնող հայ կյան-

²⁰ **Աբեդյան Մ.**, *Երկիր*, հատոր Դ, Երևան, էջ 545, 1970 (այսուհետև՝ **Աբեդյան Մ.**, *Երկիր*, հ. Դ):

²¹ **Սարիսյան Ս.**, գիրք վեցերորդ, էջ 13:

քը»: Աբեղյանը նշում է հայոց ճանապարհային քարտեզը՝ «Դրա համար երկու ճանապարհ է ներկայանում նրանց՝ վերծանել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը և ապա օգտվել եվրոպական լուսավորությունից, որ մեր նոր գրականության համար նույն դերը պիտի խաղար, ինչ որ բյուզանդականը մեր հին գրականության համար»²²:

Էջմիածինը, Նոր Զուղան, Կ. Պոլսի, Վենետիկի միաբանությունները, հնդկահայ համայնքը դառնում են գիտամշակութային շարժման կենտրոններ: Ս. Սարինյանը նշում է. «Այսպես, հայ վանականների մեծամեծ ջանքերով վերընթերցվում են հին մատենագրության անհասկանալի դարձած ու մոռացված էջերը եկեղեցական թե աշխարհիկ, գրվում են քերականության, տրամաբանության դասագրքեր, և ստեղծվում է նոր գրաբար գրականությունը, որ, ինչպես Աբեղյանն է նշում, իր պատմությունն է ստեղծում Սիմեոն Զուղայեցուց և Առաքել Դավրիժեցուց մինչև Արսեն Բագրատունի,-հետևաբար,- հետևելով Աբեղյանի մտահանգմանը՝ Սարինյանը հասնում է հարցի լուծմունքին. այն, ինչ սկսել է 17-րդ դարը, 19-րդ դարը ստանում է իբրև ժառանգություն, ուրեմն 19-րդ դարի գրաբար գրականությունը չի կարելի բաժանել աշխարհաբարից, այսինքն ձևաբանվում էր հին և նոր լեզուներով, «ապա և մեր նոր գրականությունն սկսվում է 17-րդ դարում, և ապա վերջին երեք դարերը շարունակություն են միմյանց: 17-րդ դարն է միայն, որ շարունակող չէ, այլ վերծանող»²³:

Սարինյանը մեկնաբանում է նաև 19-րդ դարասկզբի բանաստեղծության աբեղյանական անդրադարձները, որում բանագետը գերազանցապես քննության է ենթարկել Մխիթարյանների կլասիկական չափաբերությունը՝ վերջնաբերությունում արժևորելով Վանանդեցու և Ալամդարյանի ստեղծագործության

²² Աբեղյան Մ., *Երկեր*, հատոր Դ., էջ 545–546:

²³ Սարինյան Ս., գիրք վեցերորդ, էջ 13, տե՛ս Աբեղյան Մ., *Երկեր*, հատոր Դ, էջ 547:

բնագրերի ընթերցումները, հաստատելու համար, որ նրանց երկերը կրում են «19-րդ դարու մեր գեղեցիկ գրականության գրեթե բոլոր գլխավոր գաղափարներն ու զգացումները»²⁴:

«Ինչպես տեսնում ենք,- գրում է Սարինյանը,- Աբեղյանը գրական-պատմական ընդհանուր գաղափարի մեջ է առնում 17-19-րդ դարերի գրականությունը և այն բնութագրում «գրականության նորոգություն» հասկացությամբ: Նա հատուկ հոդված է նվիրում գրականության նորոգությանը և եթե «Ուրվագծերում» ներկայացնում է նոր գրաբար չափածո գրականությունը, ապա այստեղ անդրադառնում է պատմագրությանը, ինչպես նաև Սայաթ-Նովային՝ «Երգիչներ» ընդհանուր խորագրի տակ: Պատմիչներից առաջինը Առաքել Դավրիժեցին է, որին հաջորդում են Զաքարիա Սարկավազը և Աբրահամ Կրետացին, և հատկանշական է, որ Աբեղյանը դիտարկում է ժանրի անկումը դասական հայ պատմագրության համեմատ թե՛ ըստ ձևի, և թե՛ ըստ աղբյուրագիտական արժեքի: Նկատելի է դառնում անձնականացման տարրի ընդգծումը պատմության ճշգրիտ ժամանակագրության համեմատ»²⁵:

Նաղաշի «նոր աշուղներ» բառակապակցության վերաբերյալ Սարինյանը նկատում է. «Այստեղ հատկապես ուշագրավ է «նոր աշուղներ» հասկացությունը, որ որոշակիորեն ակնարկում է տարբերությունը միջնադարյան տաղերգության հանդեպ: Եվ եթե Նաղաշ Հովնաթանը կրում է անցման շրջանի երկվությունը, ապա Սայաթ-Նովան ներկայացնում է բոլորովին նոր ուղղություն»²⁶:

²⁴ **Աբեղյան Մ.**, *Երկեր*, հատոր Դ, էջ 600:

²⁵ **Սարինյան Ս.**, գիրք վեցերորդ, էջ 14:

²⁶ **Սարինյան Ս.**, գիրք վեցերորդ, էջ 14–15:

Աբեղյանի հաստատմամբ՝ «Սակայն Սայաթ-Նովան ուրիշ կարգի երգիչների է պատկանում: Նա աշուղ է... Այսինքն ժողովրդական երգիչ»²⁷:

Կարևորելով հարցի դրվածքը՝ ակադեմիկոսը եզրահանգում է. «Այսպիսով հարցի ակադեմիական դրվածքը ենթադրում է սահմանագծել աշուղական պոեզիան գրավոր գրականությունից՝ որպես զուգահեռ ընթացող գեղարվեստական ստեղծումներ: Տեղին է դիտել, որ այդ զուգահեռը Սայաթ-Նովայի, Շիրինի, Քեանսի, Զիվանու և այլ աշուղների ուղեգծով շարունակվում է մինչև այսօր՝ առանց ներհյուսվելու գրականության գիտական պատմությանը:

Հարցի այսպիսի դրվածքը, շարունակում է Սարինյանը, թվում է սպառիչ ու գիտականորեն հիմնավոր, և գաղափար է տալիս վերստուգելու գրականության պատմության պարբերացումն ընդհանրապես»²⁸:

Տեսաբանը փաստում է, թե ժամանակին պարբերացման նույն սկզբունքով (նույն սկզբունքով է փաստվում նաև ռուս գրականությունը) Մոսկվայի համաշխարհային գրականության ինստիտուտը, հաշվի առնելով նաև տեղական-ազգային առանձնահատկությունները, հրատարակել է «Ֆրանսիական գրականության պատմություն» և «Գերմանական գրականության պատմություն» քառահատոր աշխատությունները:

Ֆրանսիական գրականության պատմությունը, քանի որ զարգացման իր օրինաչափություններով դասական է, իր կնիքն է դրել համաշխարհային գրականության պատմության վրա:

Սարինյանը, ցույց տալով ֆրանսիական գրականության պատմության պարբերացման սահմանները, գրում է. «Ինչպես տեսնում ենք պարբերացումը միանգամայն պատմականացված

²⁷ Աբեղյան Մ., *Երկեր*, հատոր Դ, էջ 535:

²⁸ Սարինյան Ս., գիրք վեցերորդ, էջ 15:

է, այսինքն գրականության պատմությունը դիտարկված է երկրի պատմության ներազգային, ներսոցիալական, ներքաղաքական տեղաշարժերի առանձնահատկությամբ»²⁹:

Գրաքննադատը, հանրագումարի բերելով «Հայոց գրականության նորոգությունը 17-18-րդ դարերում» ուսումնասիրության արդյունքները, 19-րդ դարի հայ գրականության պատմության պարբերացումը ներկայացնելով գրականության պատմաբանների դրույթներով, նշում է. «Գրականության առաջին պատմագիր Լեոն, ըստ էության, 50-ամյա գրականությունը դիտում է միասնական ընթացքի մեջ: Վերլուծելով գրականությունն ըստ ժանրերի՝ բանաստեղծություն, դրամատուրգիա և վիպագրություն, նա միայն վիպագրությունն է ստորաբաժանում երկու շրջանի՝ 50–80-ական թվականներ և 90-ական թվականներ, այսինքն գրականության պատմությունը դիտում է ժանրերի զարգացման ներքին ուղեգծով, առանց կոնկրետ պատմական շրջաբաժանման»³⁰:

Այս անդրադառնում է Արփիար Արփիարյանին՝ գրելով. «Արևմտահայ գրականության պատմաբան Արփիարյանը գրականության 50-ամյա պատմությունը ստորաբաժանում է **երկու շրջանի՝ 1850–80-ական թվականներ և 1885–90-ական թվականներ**: «Պոլսո այդ գրականությունը, - նշում է Արփիարյանը, - որ 1850-ին կթվագրենք, հանգրվանի մը կհասնի 1880-ին: Այդ թվականը Արևելքին մեջ կարևոր դեպքեր պատահած են և 1850-ին պատկանող գրագետներն ու հրապարակագիրները մեծ մասամբ աներևոյթացեր են»»³¹:

²⁹ Նույն տեղում, էջ 16:

³⁰ Նույն տեղում, էջ 16:

³¹ **Սարինյան Ս.**, գիրք վեցերորդ, էջ 16: Տես՝ **Արփիարյան Ա., Պատմություն ԺԺ դարու Թուրքիո հայոց գրականության**, 1944, էջ 25:

Սարինյանը կարևորում է Հրաչյա Աճառյանի, Լևոն Մանվելյանի, Վրթանես Փափագյանի, Լևոն Շանթի, Հակոբ Օշականի որոշարկված պարբերացումները ևս:

Խորհրդային ժամանակաշրջանում գրականագիտության, փիլիսոփայության, պատմության հարցադրումների ընդհանրացումները ներկայացվում էին նաև ռուս և եվրոպական տեսական մտքի նվաճումներին զուգահեռ: Այս իմաստով Սարինյանը նշում է. «Ռուս և եվրոպական գրականությունների պարբերացման փորձը ցույց է տալիս, որ հայոց գրականության նոր շրջանի պատմության պարբերացումը միանգամայն հիմնավոր է: Մենք, ճիշտ է, ունեցել ենք կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ և դրանց տվել ենք ազգային յուրահատկություն, բայց մենք դարաշրջաններ չենք ստեղծել, ինչպես կլասիցիզմը, լուսավորականությունը, ռոմանտիզմը ֆրանսիական գրականության մեջ, և մեր գրական-գեղարվեստական ազգային ոճը ձևավորվել է եվրոպական գրականության համաբնագրում»³²:

Ավարտելով առաջադրված հարցի վերաբերյալ «Հայոց գրականության նորոգությունը 17–18-րդ դարերում» քննասիրության առաջին մասը՝ հայոց նոր գրականության պարբերացման ճշգրիտ տարբերակի վերաբերյալ, ակադեմիկոսն ընդհանրացնում է. «Եվ այսպես, ավարտելով փորձառության այս շրջանը, կարող ենք գիտականորեն հիմնավորված համարել հայոց նոր շրջանի գրականության պարբերացման ստույգ տարբերակը: 16-րդ դարն ավարտում է հայոց միջնադարը, գրականությունը եզրափակելով Նաղաշ Հովնաթանով: Նոր շրջանը սկզբնավորվում է 17-րդ դարով, նշանավորելով գրականության պատմության մի ամբողջական էտապ, կազմավորման ու ձևավորման իր առանձնահատուկ գծերով, որ կարելի է անվանել

³² Նույն տեղում, էջ 19–20:

«գրականության նորոգությունը 17–18-րդ դարերում մինչև 19-րդ դարի 20-ական թթ.»»³³:

«Նորոգություն» ընդհանուր հասկացությամբ բնորոշված մտավոր-գրական շարժումը ընթացք է ստանում արդեն դարի կեսերին: Նորոգիչները ձգտում են արթնացնել ազգի հիշողությունը, անցյալի խորխորատներից վերհանել ազգային արժեքներ՝ պետական, հոգևոր կյանքի կազմակերպման ընդհանրականները...: Համակարգվում է դասական լեզուն, կազմվում են բառարաններ, փաստ է դառնում տարաբնույթ ձեռնարկների ստեղծումը: Միջին հայերենից հետո մատենագրությունը նորից անցում է կատարում գրաբարին: «Գյուտենբերգի գյուտը շուտով տպարանական գործի է կոչում հայ ազգասերներին՝ լույս ընծայելու ձեռագիր հուշարձանները՝ Աստվածաշունչ, Ագաթանգեղոս, Կորյուն, Եղիշե, Փավստոս, Խորենացի, Նարեկացի, Շնորհալի և մատենագրության այլ էջեր: Գիրքը դառնում է ազգի հոգևոր կազմավորման գաղափարական գործոն»³⁴, -գրում է Սարինյանը:

Տեսաբանը, մինչև հարցի վերջնական լուծմանն անցնելը, կարևորում է նաև 18-րդ դարի երկրորդ կեսի մշակութային շարժը, ինչպես Ս. Ղազարում Մխիթարի գլխավորությամբ Մխիթարյան միաբանության ստեղծումը (1717), որի եվրոպականացված-հեղափոխական գործունեությունը խիզախորեն շարունակվում է առ այսօր, ներկայացնում հնդկահայ գաղութի հզոր երևույթը՝ իր ինքնատիպ առաջնորդներով, ներկայացրած ու հետապնդած նպատակ-ծրագրերով, առաջադրած խնդիրներով, օրենսդրական-քաղաքական ծրագրերով, թարգմանական գործունեությամբ, որ դարերի հոլովույթում անվերապահորեն արժանացել է խոր հիացմունքի, մեծարանքի:

³³ Նույն տեղում, էջ 20:

³⁴ Նույն տեղում, էջ 21:

Սարինյանը բարձր է գնահատում 18-րդ դարի 2-րդ կեսին Մխիթարյանների՝ հայագիտության մեջ ցուցաբերած աննախադեպ խիզախումը և հայոց մշակույթային ու գիտական կյանքի քաղաքակրթման գործում ունեցած մեծ վաստակը: «Մխիթարյան միաբանությունն... իր գոյության ընթացքում անգնահատելի դեր է կատարել հայ գրքի, գրականության, մշակույթի, թարգմանական արվեստի և առհասարակ հայագիտության զարգացման գործում»³⁵, - նշում է տեսաբանը:

Հնդկահայ գործիչները ևս աննկատ չեն մնացել տեսաբանի քննության մեջ. նրանք լուսավորիչներ էին և ազգային վերաշինության իրենց ծրագրերի հիմքում դնում էին գիտության և լուսավորության յուրացումը: «Ազատությունը կյանքի բոլոր բարիքների աղբյուրն է», - ասում էր Հովսեփ Էմինը: «Եվրոպան ամենքիս գաղափարն է, այն, ինչ կորցրել ենք գիտությամբ, պարտավոր ենք ետ ստանալ իմաստությամբ և արիությամբ», - գրում է Մովսես Բաղրամյանը³⁶:

Այս շրջանի գրականության պոետիկայի հարցերի մասին Սարինյանը նշում է. «Գրականության նորոգության էական առանձնահատկությունը մի կողմից դասական բանաստեղծության տաղաչափության, մյուս կողմից ժողովրդա-աշուղական պոեզիայի արևելյան չափի համադրությունն է: Նկատելի է դառնում երկու ոճերի ներթափանցումը, որ ուրույն երանգ է տալիս լեզվամտածողությանը և աշխարհի ընկալման բանաստեղծական պատկերը ազատում սիմվոլիկ-այլաբանական բնույթից: Անցման շրջանի բանաստեղծը Ն. Հովնաթանն է, որով «փակվում է մեր հին երգիչների շարքը և սկսվում է նոր աշուղների շրջանը միջին տեղն է բռնում հնի և նորի»³⁷:

³⁵ Նույն տեղում, էջ 22:

³⁶ Նույն տեղում, էջ 23:

³⁷ Նույն տեղում, էջ 23–24:

Գրականագետը մեկնաբանում է գրականության նորոգության մեջ գեղարվեստական աննախադեպ նվաճում հանդիսացող հայկական կլասիցիզմի տեսությունը. այն համաշխարհային գրականության բացառիկ նմուշներից է համարում: Վերջինիս գաղափարագեղագիտական հիմքը հանդիսանում են ազգային պատմությունն ու դիցաբանությունը:

Ակադեմիկոսը գրում է. «Կլասիցիզմը ստեղծեց թարգմանական մի հոյակապ դպրոց՝ հայ մշակույթը հարստացնելով համաշխարհային գրականության դասական երկերով (Հոմերոս, Վերգիլիոս, Պլուտարքոս, Սոֆոկլես, Պլատոն, Եզովպոս, Դանթե, Միլտոն, Վոլտեր, Ռասին, Ֆենելոն, Դեֆո և ուրիշներ)»³⁸:

Հարցը ընդհանուր եզրակացության հանգեցնելով՝ տեսաբանը ներկայացնում է Պաղտասար Դպիրի, Պետրոս Դափանցու և Հարություն Ալամդարյանի գրական դիմանկարները, այդ համաբնագրում մեկնաբանություն տալիս նրանց գրական ստեղծագործությունների ժանրային բնույթին, ցույց տալիս հայ քնարերգության զարգացման ուղին 19-րդ դարում:

Եզրակացություններ

Հայոց գրականության պարբերացման սկզբունքները որոշարկելը կարևոր խնդիր է լուծում գրականության պատմության բազմաթիվ իրողությունների, գրական ընթացքի հստակ ժամանակագրության, գիտական-տեսական շատ հարցերի սպառիչ պատասխաններ տալու առումով:

Սերգեյ Սարինյանն իր մի քանի ուսումնասիրություններում վերանայում է հայ նոր գրականության պարբերացման հարցի ընդունված դրվածքը և առաջադրում գիտականորեն հիմնավորված սահմանում՝ առաջադրելով նոր սկզբունքներ:

³⁸ Նույն տեղում, էջ 24:

Հայոց նոր գրականության ժամանակագրությանը ճիշտ լուծում տալու համար Սարիյանն ի գիտություն է ընդունել Լեոյի և Մ. Աբեղյանի աշխատություններում գրականության պարբերացման խնդրի տրամաբանական շեշտադրումներն ու եզրահանգումները, որոնք ուսումնասիրել, հանգամանորեն ներկայացրել և, ըստ այդմ, իր դրույթներն է ձևակերպել մեր կողմից հետազոտության ենթարկված «Հայոց գրականության նորագույնը 17–18-րդ դարերում» խնդրադիր ուսումնասիրության մեջ:

Ըստ պարբերացման նոր սկզբունքի՝ Սարիյանը տեղաշարժում է հայ դասական կամ նոր գրականության սկզբնավորման ժամանակը՝ առաջարկելով և՛ Մխիթարյանների, և՛ հնդկահայերի մշակույթը, Պաղտասար Դպիրի (1683–1768), Պետրոս Դավանցու (1700-ական թթ. սկիզբ – 1784) և Սայաթ-Նովայի (1722–1795) ստեղծագործությունները ներկայացնել նոր շրջանի գրականության ուղեծրում:

ЗИНАИДА БАЛАЯН,

*Доктор филологических наук,
преподаватель международного университета «Евразия»*

СИСТЕМНЫЙ АНАЛИЗ 6-ГО ТОМА «ДВУХ ВЕКОВ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ» СЕРГЕЯ САРИНЯНА

Резюме

Основной проблемой этой статьи является вопрос определения происхождения новой армянской литературы, имеющего почти столетнюю историю в истории армянской литературы, который с первых десятилетий прошлого века неверно устанавливался и

поднимался в исследовании. Он предлагает и требует фундаментального решения.

С какого периода начинается начало новой армянской литературы, под чьим руководством...? В начале XIX века, под руководством Х. Абовяна? Саринян называет этот факт «ошибкой», одновременно выражая недоумение тем, что в 1920-х гг. эта гипотеза была документально подтверждена, а ошибочная точка зрения зафиксирована в школьных и вузовских учебниках (как, кем и каким образом?), смысл которых сводился к следующему: новая армянская литература зародилась в начале XIX века, под руководством Х. Абовяна.

Отметим следующий важный факт, не утративший своей актуальности и остроты: Академик НАН РА С. Н. Саринян в своем исследовании «Возрождение армянской литературы в XVII–XVIII веках» (которое является краеугольным камнем и первоисточником нашего исследования,) отмечает, что в 1960-х годах, в связи с созданием пятитомной истории новой армянской литературы вопрос о ее периодизации был поднят совместно с Ученым советом Института литературы имени М. Абега. В результате начало нового периода пришлось на XVIII век, то есть на 1750 год.

Наша главная цель исследования – прийти к соответствующему выводу, прослеживая проблемные вопросы, поставленные литературным критиком, анализируя его предварительное научное изучение вопроса в этом направлении.

Новый период литературы начался в XVII веке. Его можно назвать «литературным возрождением XVII-XVIII веков до XIX века, в 20-е годы».

Для анализа работы использовались **исторический, биографический, структурный, сравнительный, семиотический, переоценочный и источниковедческий** методы.

Ключевые слова: академическое направление, точность ума, индо-армянская культура, родовой инстинкт, Мхитаряны, литературные школы, классицизм, средневековье

ZINAIDA BALAYAN

PhD, lecturer of Eurasia International University

THE CRITICAL FRAMEWORK OF SERGEY SARINYAN IN THE SIXTH VOLUME OF “TWO CENTURIES OF ARMENIAN LITERATURE”

Abstract

The main issue addressed in this article is the question of defining the origins of modern Armenian literature, which has nearly a century-long history within the broader history of Armenian literature, and which, since the early decades of the last century, has been inaccurately identified and approached in scholarly research. It presents and demands a fundamental resolution.

From which period does the origin of modern Armenian literature begin, under whose leadership...? In the early 19th century, under the leadership of Kh. Abovyan? Sarinyan calls this fact a “mistake”, at the same time wondering that in the 1920s that version was perceived as documentary, and the wrong view was recorded in school and university textbooks (by whom, how, and in what way?), the meaning of which was as follows: the new Armenian literature originated at the beginning of the 19th century established by Kh. Abovyan.

Let us take into consideration the following important fact which has not lost its relevance and urgency: Academician of the NAS

of RA S. N. Sarinyan in his study “The Renewal of Armenian Literature in the 17th–18th Centuries” (it is the cornerstone and source of our research) notes that in the 1960s the issue of periodization was put into the consideration of the Academic Council of the Institute of Literature named after M. Abeghyan of the RA NAS on the occasion of creation of a five-volume history of new Armenian literature. The result was that the beginning of the new period was defined the mid 18th century, i.e. 1750.

The main goal of our research is to reach an appropriate conclusion by addressing the problematic questions posed by the literary critic, thus analyzing his primary scientific interpretation of the target question.

The new period of literature began in the 17th century. It can be called the “literary revival of the 17th–18th centuries up to the 1820s”.

We have used historical, biographical, structural, comparative, semiotic, re-evaluating and source studying methods of analysis for this work.

Keywords: *academic direction, mind accuracy, Indo-Armenian culture, tribal instinct, the Mkhitaryans, literary schools, classicism, Middle Ages.*